# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

<< ԲՄԴ-ԳՀԱՊՁԲ-15/1-18/2>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստի

Շիրակի մարզ, գյուղ Բայանդուր, փ.9, շ.8

«17» հունվարի 2018թ.
ժ14:00

*<<Բայանդուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ*

Գնման առարկա է հանդիսանում 2018թ-ին <<Բայանդուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կարիքների համար վառելիքի ձեռքբերումը:

***Մասնակցում էին՝***

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Մարտիրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Կ. Վարոսյան , Ծ. Թաթուլյան, Ջ. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Վալեսյան

**1. Հայտեր են ներկայացրել.**

*ա/ <<Մաքս օիլ>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Տպագրիչների 8, հեռ. 010 52-67-51,*
*Հրավերը (ծանուցումը) 10.01.2018թ ին հրապարակվել է տեղեկագրում: Հայտեր ներկայացրել են վերոնշյալ 1 մասնակիցը:*

**2. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ծրարները կազմվել և ներկայացվել են սահմանված կարգի պահանջներին համապատասխան:**

***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

**3. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների հայտերում առկա են պահանջվող բոլոր փաստաթղթերը: Մասնավորապես՝**

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով հարկ վճարողի հաշվառման համարը,*

*բ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,*

*գ. գնային առաջարկ,*

*դ. հայտի ապահովում,*

*զ. իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),*

*է. հայտարարություն՝ գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին,*

*ը. հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.*

*թ. այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավելի, քան տասը տոկոսը՝ ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն պարբերության մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում են գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները:*

***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

**4. Հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների կողմից փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:**

***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

**5. Մասնակիցը առաջարկել են պայմանագրի կատարման հետևյալ գները՝**

| N | Վառելիքի անվանումը | <<Մաքս օիլ>> ՍՊԸ (դրամ) | |
|---|---|---|---|
| | | Գինն ԱԱՀ-ով | Գինն առանց ԱԱՀ |
| 1 | Դիզելային վառելիք | 1290000 | 1075000 |

**6. Հայտերի բացման նիստում, գնահատող հանձնաժողովի կողմից կողմ՝ 4, դեմ՝ 0 ձայների հարաբերությամբ՝**
1) թիվ 1-ին չափաբաժինով առաջին տեղ է զբաղեցրել <<Մաքս օիլ>> ՍՊԸ ն,
***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

***Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները կճանաչվեն համապատասխան չափաբաժինների հաղթողներ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացվող հարցման դրական պատասխանի, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին բավարարելու դեպքում:***

**7.** <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից: Պայմանագրերը պատվիրատուի կողմից հաղթող ճանաչված մասնակիցների հետ կնքվելու են հինգ օրացուցային օրվա ընթացքում պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում:
***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

**8.** Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 23.01.2018 թվականին ժամը 12:00, Շիրակի մարզ, գյուղ Բայանդուր, փ.9, շ.8 հասցեում, ընտրված մասնակցին որոշելու համար:
***Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ Կ. Մարտիրոսյան

անդամներ՝ Կ. Վարոսյան

Ծ. Թաթուլյան

Ջ. Հակոբյան

քարտուղար Պ. Վալեսյան: